



ՆՇԽԱՐՆԵՐ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԳՐԱԴՈՒՄՆԵՐԻՑ

Կոմիտաս վարդապետը խորապես համոզված էր, որ անցյալի հայ երաժշտարվեստի ամբողջականության ըմբռնմանը կարելի է հասնել հավասարապես ուսումնասիրելով հոգևոր-եկեղեցական և աշխարհիկ-ժողովրդական երգատեղծությունը:

Եվ իրոք, Կոմիտասի կատարած ազգագրական, գիտա-հետազոտական ու ստեղծագործական աշխատանքներն իրենց զգալի մասով (մոտավորապես կիսով չափ) կապված են հայ հոգևոր երգարվեստին:

Կարևոր նշանակություն ունեն, մասնավորապես, հայ հոգևոր եղանակների կոմիտասյան գրառումներն իսկ: Դրանք ըստ ամենայնի լուսարանում են արվեստագետ-գիտնականի ստեղծագործական կենսագրության այս կամ այն հատվածը. հայտնաբերում են հայ երգարվեստի նոր շրջանի վերելքին իրենց նշպատող բերած հարգարժան անուններ. ու ներկայացնելով մինչ այդ չգրառված որևէ հազվագյուտ երգ, և կամ նրա եղանակի մի այլ գեղեցիկ տարբերակը, գաղափար են տալիս հայ հոգևոր եղանակների հավաքման գործի նկատմամբ Կոմիտասի մշակած ուսանելի վերաբերմունքի մասին:

Հիշյալ եղանակների գրառմանը (հայկական ձայնահիշերով) Կոմիտաս վարդապետը ձեռնամուխ է եղել շատ կանուխից, տակավին ճեմարանում ուսանելու տարիներից: Այդ տարիներին վերաբերող գրառումներից պահպանվել են ճանաչողական ու գեղարվեստական նշանակություն ունեցող մի քանի կարեկոր մյուսեր: Դրանցից ամենահինն է՝ Հրեշտակապետաց կանոնի օրհնության գրառումը, որ մեզ հասել է երկու մաքրագիր օրհնակով (Ա և Բ)¹: Երկու օրհնակներն էլ ունեն հետևյալ տիտղոսաթերթը.

Օրհնություն

Հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիելի և

ամենայն երկնային զորացն

Ծարական Բկ

ստեղի եղանակ

(Սուրբ Էջմիածնաց՝ ի հին Գոյն)

Ձայնագրեալ

Ի Յովակիմ վարդապետ Դամբեան

Վաղարշապատցոյ

ի 1887 ամի

Ձեռամբ

Աշակերտի Ե դասարանի Գեորգեան ճեմարանի Մ. Ա. Ս. Էջմիածնի Սողոմոն Գեորգեան Կուտինացոյ
Ի Սուրբ Էջմիածին

Եղանակը, որ բոլորովին տարբեր է Ն. Թաշճյանի ձայնագրածից², երկու օրհնակներում էլ հիմնականում նույնն է (ներառյալ «Սկսումքք» ու «Փառքք»-ը): Միայն Ա օրհնակում եղանակի հետ բերված են՝ ա., բ., դ. և զ. տների խոսքերը. իսկ Բ օրհնակում՝ ման զ., ե., ու է. տների խոսքերը, տակե-տակ: Այնուհետև, Բ օրհնակում՝ գրական խոսքերի դ. ու ե. տների սկզբից ու վերջից պաշմանական նշաններ են դրված, եղանակի վրա տեղ-տեղ գրած է «ծանր» և մշակման համար նշումներ են արված, բոլորն էլ մատիտով: Իսկ որ կարևորն է՝ դարձյալ Բ օրհնակի վրա երգի առաջին տան վերջին խոսքերի («Եւ մեր հողերէնքս») եղանակը մատիտով ջնջված է ու տեղը բերված եղանակի նույն հատվածի «ծանր» փոփո-

¹ Գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի դիվան, ծրար №№ 333ա (Ա) և 333 (Բ):

² Հմմտ.՝ Ձայնագրեալ Ծարական՝ հոգևոր երգոց, Սուրբ և ուղղափառ առաքելական եկեղեցոյս Հայաստանեայց, Վաղարշապատ, 1875, էջ 844:

խակը: Եվրոպական ձայնանիշերի փոխադրելով ու առաջ բերելով այս վերջին հատվածը ևս, մենք ստորև արտահայտած ենք լինում Կոմիտասի քննարկվող ձեռագրի երկու օրինակների էլ երաժշտական բովանդակությունը:

Կոմիտասի ձեռագրերում ամենասևեռուն ուշադրության արժանի հաջորդ նշույթը՝ 1893 թվի հոգևոր երգերի ժողովածուն է, որն, ամբողջությամբ սուս, մասնավոր քննության չի ենթարկվել տակավին³: Այն ներկայացնում է մի տեսոր, 20x28 սմ չափի մեծադիր էջերով, որի առաջին ինը թերթերն են օգտագործված միայն: Տիտղոսաթերթն է՝

Հոգևոր եղանակներ
հաւաքեց

Սողոմոն Ա. Սարկաւագ Սողոմոնեանց
միաբան Ա. Էջմիածնի
14 մարտի 1893 թ.
Ս. Էջմիածին

Ժողովածուն ներփակում է հետևյալ նշույթերը (մեծ մասամբ տաղեր և պատարագի երգեր):

- 1.—«Հախի մի պայծառ տեսի».
- 2.—«Ահեղ ձայնս որ ես լրուայ».
- 3.—«Հաւուն հաւուն արթնացեալ».
- 4.—«Ստեղծող մանկանց, մանուկ ցուցար».
- 5.—«Դասքըն հրէական էին պահապան».
- 6.—«Տէր ողորմեա» (չափաւոր-ծանր, ԲԿ).
- 7.—«Տէր ողորմեա» (ծանր, ԱԿ և ԲԶ).
- 8.—«Միաշաբաթ օր հանգստեան».
- 9.—«Կնոջ Տէր, շնորհեա Տէր»...

³ Գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի դիվան, ծրար № 332:

10.—«Տէր ողորմեա» (ծանր, ԲԿ).

11.—«Բաց մեզ Տէր, բաց մեզ».

12.—«Եւ ևս խաղաղութեան»...

13.—«Եղիցի անուն Տեառն օրհնեալ».

14.—«Թագաւորեցէ Տէր յաշտեան».

15.—«Փառք յարութեան հո Տէր»...

Եթե հաշվի առնենք տեսրում մնացած ավելի փոշր չափի մի անկախ թերթ ևս, դարձյալ պատարագի հատվածներով («Ամէն, եւ ընդ հոգւոյդ քում»...)՝ ընդամենը 16 կտոր: Սրանք հոգևոր միաձայն երգերի եղանակների գրառումներ են, համարյա թե բոլորն էլ անտիպ: Տեսրում ձայնագրությունները կատարված են թանաքով, մաքուր և գեղեցիկ:

Հույս ունենալով, որ մենք տակավին առիթ կունենանք սույն ժողովածուի արժեքի մասին ավելի մանրամասն խոսելու և նրա բովանդակությունը ամբողջությամբ ներկայացնելու «Էջմիածին» ամսագրի էջերում, ստորև, ընթերցողին մի ճաշակ տալու նպատակով, առաջ ենք բերում երկու երգ միայն (եվրոպական ձայնանիշերի փոխադրված վիճակում). «Միաշաբաթ օր հանգստեան» և «Բաց մեզ Տէր»: Երկուսի ևս եղանակները ձայնագրված եղել են ընդհանրապես, բայց տարբեր կադապստրների մեջ: Առաջինը ծանր է էդ. Հակոբյանի կազմած ժողովածուից էլ⁴. իսկ երկրորդն ունենք դարձյալ Ն. Թաշճյանի ձայնագրությունների շարքում⁵:

Ն. ԹԱՇՃՅԱՆ

⁴ Հմմտ.՝ Հայկական պատարագի տաղեր և մեղիդիկներ, պատրաստեց Էդ. Հակոբյան, Գանդիս, 1963, էջ 20:

⁵ Հմմտ.՝ Երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1877, էջ 420:

ՍԿՍՈՒԱԾՔ



ՈՐ ՅԱՆԵԼԻՑ ՍՏԵՂԵՐ

Չափաւոր 4, բն Սեղի

Որ յա - ցե - ից ստեղծեր զպաշտօն - եայս քո
 ի հուր կի - զե - լոյ հուրոյ ա - ցե - ղա - կան
 ընդ հո - սից օրի - ցեմք ըզ - քեզ եւ
 մեք հո - ղե - ղեցաւ եւ մեք հո - ղե - ղեցաւ։

ՓԱՌԺ ԵՒ ԱՅԺՄ

Փառք հոր եւ որդւոյ եւ հոգ - ւոյն սրբ - բոյ։
 Այժմ եւ միշտ եւ յա - ւիտեանս յա - լի տե - ցից, ա - մէն։

Մանր. ԱԿ

ՄԻԱՇԱՐԱԹ ՕՐ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Մի -
կա -ա -
ճայքշա - բաթ
ե - կիցօր հաճ - գըս-տեան
ի գե - ղեզ-ման

կա - ճայք

ե-կից

ի

գե - ղեզ -

ման:

Մանր. ԳԶ և ԲԶ

ԲԱՑ ՄԵԶ ՏԵՐ

Բաց

մեզ

Տեր.

բաց

մեզ

Տեր

զդուռն

ո -

ղոր -

մու -

թեան

որ

ող -

բա -

լով

կար -

դամք

առ

քեզ: